ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. օգոստոսի 5-ից 18-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Հայկոու) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

   Դիանա Անանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Հայկոու օգոստոսի 5-18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՉԺՀ Հայնան նահանգի առևտրի դեպարտամենտի միջազգային համագործակցության և փոխանակման կենտրոն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտի» խորագրով դասընթացին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Սեմինարը կենտրոնացած էր «Համապարփակ մաքսային գոտի» թեմայի վրա: Այն ներկայացնում էր Չինաստանի փորձը և դասերը մաքսային գոտիների զարգացման, ինչպես նաև երկակի շրջանառության պայմաններում Հայնան ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտու զարգացման և բարեփոխման օրինակը: Սեմինարի ընթացքում քննարկվել է բաց տնտեսության նոր համակարգում համապարփակ մաքսային գոտու տրամաբանությունը, ինչպես նաև վերամշակող առևտրի վերափոխումն ու արդիականացումը:

   Սեմինարի շրջանակներում կազմակերպվել են այցեր Հայնան նահանգի Ցյոնհայ և Սանյա քաղաքներ, ինչպես նաև Ցզյանսու նահանգի Շանհայ և Սուջոու քաղաքներ: Ծանոթացման նպատակով կազմակերպվել են շրջայցեր մաքսային գոտիներ, ազատ առևտրի գոտիներ և սեմինարի թեմային սերտորեն առնչվող այլ վայրեր:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Սեմինարի ընթացքում ներկայացվել են համապարփակ մաքսային գոտու շրջանակներում հարկային քաղաքականության մեջ նորարարությունների և հարկերի վերադարձման մանրամասն գործնական օրինակներ, մրցակցային առավելությունների գործարկման և ստեղծման մոդել, առևտրի ընթացակարգերի պարզեցման միջոցառումների իրականացում և զարգացման ռազմավարություններ, որոնք կապում են առևտրի ընթացակարգերի պարզեցման միջոցառումները նավահանգստային գոտիների զարգացման հետ:

Ներկայացվել են զեկույցներ «Հայնան ազատ առևտրի նավահանգստի մասին օրենքի» բովանդակությունը, նորարարությունները և առանձնահատկությունները, Հայնանի ազատ առևտրի նավահանգստի կառուցման ընդհանուր պլանը և մաքսային փակման նախապատրաստումը, Հայնան ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտու քաղաքականության էվոլյուցիան և զարգացման կարգավիճակը և այլ թեմաներ:

8. **<u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>**

Դ. Անանյան

22 օգոստոսի 2025թ.